

5 ժամին և ամրոխը այնուհետեւ կարողացաւ ազատ շրջել. ոչ մի տեղ
ոչ ինչ անկարգութիւն չէ պատահել. Փարիզի հասարակութիւնն այս
գիշերը անքուն մնաց, իսկ ես 8 ժամ՝ անընդհատ շրջելուց յետոյ 2
ժամին վերադարձայ գեղի տուն. հասարակութեանը՝ վիճակիցաւ գեղե-
ցիկ աղջիկների հետ պարահանդէսը, իսկ ինձ՝ ոտքերի ուռչելուց ան-
հանգիստ քունը:

Թ-բ-:

ՄԱՎԱԼՈ ՔԱՀՈՎԱՅԻ ՍԵՆԹՈՎԱՅԱՅ.



ՄԵՐ ՆԱԽՆԻՔ

ԵԿ

ՆՈՑԱ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՔ.

Եռնք միանգամ հետաքրքիր եղան մեր առաքելա-
շնորհ սուրբ Հարց և Արդապետաց զանազան
գարերում շարադրած կրօնական և պատ-
մական իմաստից երկերը կարդալ և ի քննին առնել, երբեք չդադարե-
ցին ժամանակ առ ժամանակ թէ բանիւ և թէ գրով գրուատել նոցա
տրամախոչ լիզուն, ճապուկ ու ճարտար մեծիմաստ խօսքերի միմեանց
հետ ունեցած կապակցութիւնը, յստակ ու պարզ սահուն ոճերի գե-
ղեցկութիւնը, կարդ ու կանոնով տողած նշանական բառերի շարամա-
նութիւնը, ընդ նմին սքանչանալով միանգամայն նոցա երկնաձիր հան-
ձարի և մորի վերայ. Այս, ողջամիտ բանասիրի արագ գրչին գրեթէ
միշտ ընտիր նիւթ եղան մեր երանելի սուրբ Հարց այս հոգեպատում
գրուածքները բայց թէ ինչ մի տարօրինակ երեսյին անխափան կա-
պեց նոցա սիրտը մեր փառազուրկ հայրենի չքնաղ որդուոց կենաց յիշա-
տակարանների հետ, մինչ զի գովով ու գովասանքով տանել գնել նոցա
հեղինակներին աշխարհիս մեծագործ ու բարեխոչ անձանց կարգը, շատ
դիւրին է բացատրել. Մեր նախնի գրուածոց արժանաւորութիւնը չափ-
վումէ այն կետից, որ նոցա հեղինակները ամենայն զգուշութիւն գործ
են գրել գրեթէ առանց շաղակրատութեան պատմել մի իր, մի առար-
կայ թէկ ընդարձակ բայց գիւրիմաց ոճով, առանց անտեղի բառազար-
դութիւններ առանց իմաստից կրկնութիւններ և մանաւանդ առանց
ստայօդ պատմութիւններ յառաջ բերելու՝ իւրեանց ճշմարտախօսը լի-
զուից ու գրչից օրինակ, եթէ մի պատմիչ պատմումէ մի հզօր և հուժ-
կու անձի քաջութիւն, առանց խօսորվելու իրական ճշմարտութիւնից,
չէ հանում նորան այն առասպելացրած քաջերի լազարը, որոնք կատա-
ղի վագրներ են հալածել. այլ նրա արի և կորովի լինելը ցայց տալով,

և մաստամբ իւիք նորա բարի և պատուական գործերը թուելով, մի շաբք գովարանական խօսքերով կնքումէ նոյն անձի ճշմարիտ պատմութիւնը: Մի այլ պատմիչ, եթէ նկարագրումէ մի շաբագործի զազրելի գործեր, կասկած չէ յայտնում՝ նոյնպէս նոյն անձի համար թէ, դժոխքի տակն ու յատակը իրաւամբ ժառանգող մի հրեշ էր: այլ իւր անխաղաղասէր բնութեան ճիշտ տիպարը հանելով, բաւականանումէ միայն նորան չարագործ մականունը տալ:

Մեր հին մատենագրերը իմաստասիրող անձի ճաշակը բացող գոները ոչ միայն այսպիսի հատընտիր և անայլայլակ պատմութիւնները են, այլ նոցա զուարթամիտ հեղինակների քաղցրախօս լեզուն և անուշ բարբառը, ինչպէս վերը ասացինք. որոնք մի իր, մի առարկայ, այնպիսի տեսական ձեռվ նկարագրած են, որ ակամայից հետամուտ ենք լինում իմանալ թէ նոյն առարկայի որպիսութիւնը և թէ իւր ունեցած վախճանը: Առնենք ձեռքներս, Աստուծոյ գոյութեան վերայ երկրայող՝ թարձրամիտ հեթանոս ազգաց գէմ զրած նզնկայ եղծ աղանդը: արեգակը, լուսինը, օդը և ջուրը, իրեւ տկար և անզօր արարածներ ցըց տալէն վերջ, զարմանալի կերպիւ խախտումէ և նոցա այդ տեսակ աստուածների վերայ ունեցած աննենդ սէրը և ամրիծ հաւատը: մին առանց միւսի առնչութեան և մասնակցութեան, ոչինչ, անողէտք և վնասակար համարելով: Կարգանք նոյն իսկ հոգեզգօն Յովսէփ եպիսկոպոսի հայոց հաւատի մասին առ Պարսից Միհրներսէհ հաղարապետին ուղղած գեղեցիկ և իմաստուն պատասխանը, որի խոհական և անվեհեր խօսքերը զարմանք բերելով նոյն իսկ պարսից օրէնսդէտ ունկնդրաց, «բազումք այնոքիկ էին որ իրեւ լսէին՝ գովէին զպատասխանիսն»: յետ այնորիկ իրեւ սայրասուր սլաք նոյն ամբարշտի սիրտը և երիկամունքը ընդ թափ անցանելով խորամուխ, անօրէն Յազկերտի հրամանաւ մի արիւնոսւշտ պատերազմավ անհետ ջնջել է տալիս իւրեանց հաւատի գէմ բոլոր բարբանջողներին և նոյն իսկ արեգակին աստուած չգաւանողներին:

Մեր նախնի մատենագիրը խիստ վարժ են եղել և բնութեան վեհափառ տեսարանները գեղեցիկ կերպով նկարագրելու մէջ: Կարնան ժամանակ ցող է իջնում որպէս վարդի նոյնպէս և այլ բոյսերի վերայ: բայց ցողի՝ վարդին և բոյսերին աճեցնող պատմութիւնը, մի մարդարտաշար հիւսուածք են: Շովը իւր բարձրագէղ ալիքների տակ երրեմն առնում խորտակումէ նաւերսէկ նաւաստիք: բայց ծովի գէմ զայրագին մոնչող հողմի, և հողմի և ծովի հետ քաջարար կռուող նաւաստու նկարագիրը, մեր չմարմինը սարսուռ պատող և մեր սիրտը կարեկցութեան երկունքով յղացնող մի սրտաշարժ պատմութիւն են: Ահա խաղում և վիստում են զաշտերի և բլուրների վերայ թուշնոց երամներ: աշխարհիս վայելչութեան ուղն ու ծուծը առանց վշտի քամող այս անբան էակները: բայց նոցա անտրտում և բարերազգ կեանքի նկարագիրը: ո՞ր

տարաբաղդի հոգսերից թմրած սրտի վերայ ուրախութեան ցնցում չեն գործել Աշա գարեանդ և սիզաւէտ տեղերում վառ ի վառ երեւեմէ Առղոմնի փառքի հետ մըցող երփնագեղ շուշանը՝ այս և այն թռւփերի տակ ծածկուած իւր նազելի քոյրերով բայց նոցա ախորժ հոտի և զոյնի նկարագիրը, նոյնանման հրաշալիքներ ստեղծող Արարչափակի անհօւն փառքն ու մեծութիւնը պարունակող, կարծես թէ մի քարտեզ լինին մեզ համար, զոյց տալով թէ, թէեւ մարդս տքնեց արուեստական կերպով նոցա նմանները ստեղծել սակայն անզօր զանուեց իւր բարերարի պէս նոցա մէջ անթառամ գոյն ու հոտ գնել Խոկ ինչ կվերաբերի պաղարեր տնկոց, և բուոց տեսարանների նկարագրութեան, Աստուծոյ այս ձեռագործներին ևս, կարծես թէ միմեանց հետ շնորհքով ու ձիրքով կոռուացնելու համար ևն ջանք թափել մեր նախնիքը:

Բայց ամենից առաջ հարկաւոր է մեզ զիտենալ թէ, մեր նախնիք իրենց զիտութեան պառուղը աշխարհի սեղանի վերայ հանգէս բերելու համար, ինչ լուսնթափի տակ ծածկեցին իրենց անձը, որ իրենց լուսաւոր մաքի վերայ յոխորտանօք չտիրէր չբարձրանար բնականապէս մարդու գովելի յատկութեանց յառաջազիմութեան խանգարումն տուող աշխարհային հոգ և զբաղմունք: Աւ ի՞նչ տեղեր ընտրեցին արդեօք մշակել իրենց զիտութիւնը, որ նոյնպէս հանապազօրեայ միակերպ կեանքը տաղտկանք չըերէր իրենց ուսումնասէր ոգուն, և թուլութիւն իրենց կորով մաքին:

Եթէ Աստուծոյ զոյութեան վերայ գաղափար չունեցող աղքեր երբեմն կամակար մտօք բնանինը պաշտեցին միայն այն զիտաւորութեամբ, որ անընչին և ընչաւետին անխտիր սահմանեալ ժամանակին լիտուան կերակուր է ջամրում, առանց նոյնպիսի անհաւտութեան խորհուրդ և գաղափար ունենալու բնութեան վերայ: մեր նախնիքը ևս հոգով չափ սիրեցին նորան իւր այն բարեմասնութեանց համար, որ մեր հաւատը առ Աստուծած ևս առաւել զօրացնող մի յատկութիւն ունի իւր մէջ, և մեր ցաւերը առանց գեղի բուժող՝ մի ճարմար ձեռք. և այս խոկ պատճառաւ, ինչտեղ գէպի ծով կարկաջասահ զաղող զետեր տեսան, կանգնեցին նոցա դալար ափին հոյակառ մենաստանք. ինչտեղ լձերի մէջ տափարակածե բարձրացած մի ժայռ տեսան, շինեցին նորա ահարկու բարձրութեանց վերայ ճգնարաններ. ինչտեղ բարերեր հոյակառի մէջ ականակիտ աղբիւրներով շրջապատուած մի լեռ տեսան զրին նորա դագամի վերայ անմիջապէս վանդերի հիմունք. ինչտեղ օգով և ջրով առողջարար մի վայր տեսան, վեհափայր տաճարներ կանգնեցին. և ի՞նչ զիտաւորութեամբ, արդեօք նանրասէր մարգկանցից ջատագովուելո՞ւ համար, արդեօք անմիտ փառաւէրներից շուր և պատիւ ստանալո՞ւ նպատակաւ, ո՞չ նոցա՝ աշխատութեամբ փառարացած ձեռքը, մարմնական փառքեր ձեռք բերելու համար, տկար էր անգամ՝ մի քար շարժել իւր տեղից և ամբարտաւանութեան ամբարտաներ կանգ-

նել. այլ նոցա ձեռակերտները լոկ ամենուրեք հաւատ սփռելու, գիտութիւն ուսուցանելու և մշակելու միակ ըղձով էին միայն հիմնարկուած. գովելի՝ փափագ:

Ահա այս ձեռակերտների միջից էր որ, քերթողահայրն մեր Մովսէս մի ձեռը գէտ մելան պարզած՝ միւսով իւր խորչոմ ճակատը շփելով, դառնապէս ողբումէր Հայոց ազգի թշուառութեան վերայ. Ահա այս սուրբ տաճարների դռնից էր որ, Հայոց աղետալի վիճակին ականատես քաղցրախօսն Եղիշէ, գրիչ ի ձեռին շարումէր երկնային գնդի հետ մեր կրօնի և հաւատի համար Պարսից գոռ բանակի դէմ մինչև վերջին շունչ արիւն թափող անմահ քաջերի անունը: արտասուելով ևս նոյն սուրբ խմբից օձուող ոմանց վատթարների և կրօնափոխների վերայ. Ահա այս նուիրական տեղերից էր որ, բանիրունն Մեսրովի ծերութեան մահակը ձեռին իջաւ Երասիի հովիտները իւր հրաշալի քարոզներով հայրենասիրութեան՝ և կրօնասիրութեան դրօշներ բաշխել իւր անխնամ և տառապեալ հօտին: Ահա այս գիտութեան շտեմարանների միջից էր որ, առաքինին Սահակ հայրենասիրութեան խարդյկի վերայ թէժացած (տաքացած) սրտով, հապշտապ վաղումէր արքայական դռներ և դիւանատներ, իւր սիրելի եղբօր — Մեսրովի Հայոց նշանագրերի գտնելու բաղձանքին վերջ տալ որոնմամբ: Ահա այս սուրբ գաւիթների սեամից էր որ, Երկնաքաղաքացին Գրիգոր, մարդկային մեղսասէր ոգւոց փրկութեան համար, խնկանուէր մաղմանքներ էր առաքում առ բարձրեալն Աստուած անպարտելի զէն և ասպար խնդրելով մեղ յամենայն ժամ փորձողի գէմ: Ահա այս սուրբ սրահների յարկի տակից էր որ, շնորհալին ներսէս ի սաստ և ի զգուշութիւն աշխարհի կաշառակուրծ գատաւորաց և ի իրատ հոգեոր պետաց տիրաբար վայելուչ օրէնքներ էր արձակում նոցա, սաստելով հայրաբար ի փախուստ տալ սատանայական գործերից և առաքինութեան և բարեգործութեան զրահներով գոտեպնդել իրենց մէջքը: Ահա այս բարձրաբերձ լերանց թմբերից էր որ, Փրկչի խաչը յօժարութեամբ ուսներին բարձած, անթիւ, անհամար մարտիրոսներ թռան, ոլացան ամենայն աշխարհ՝ խաւարի դէմ աչեղ ճակատամարտներ մղել Աւետարանի բոցանշոյլ լուսով:

Եւ վերջապէս ահա նոյն սուրբ հայրերն էին որ, ի սէր իրենց հայրենի արտեան լերանց, ուր իմաստութիւն հասաւ կլեց իրենց տղիտութիւն. ի սէր նորա եղեմական վայրեաց, ուր առաքինութիւն թռաւ սաւառնեց իրենց սրբասէր անձանց վերայ. ի սէր նոցա պաղուկ պայծառ ջրերին, ուր հանապազ մնչեցին իրենց սիրոյ դասերը. և ի սէր իրենց անգին շնորհներ պարզեողին, աչք յառեցին միանգամ և ի իրենց գրկած ու պաշտած իրթնացեալ եկեղեցւոյ վերայ. աչք յառեցին սոսկալով նորա անշուք տէրունեան սուրբ սեղանին, ուստի և ոչ որպէս իսրայելի որդիքներ փութացին անբան գառանց զենմաւնքներով պաշտել նորան, այլ այս սուրբ մայրաքաղաքի մէջն ու յատակը պաշ-

տեցին վերապատռւեցին գեղեցիկ և իմաստուն ձառերով, և խորհրդաւոր գրուածներով, յաւ էտ նորա անշարժութեան և անսասանութեան քաջարի պահապաններ հանդիսանալով, եւ այս Հոյաստանի ոյն տիտուր ժամանակ, ուր բիւրաւոր մարդիկ գեռ ևս կոապաշտութեան ետնից ընկած՝ ոմն ձիւնապատ Մասիսի ստորածից բազկատարած Արամազդ Էր փառաբանում, լիութիւն, պարարտութիւն ինգրելով իւր երկրին իւր անդին: Ոմն նորա շղթայակապ գոտիներից ձեռնամած Անահիտ Էր օրհնում, ինամբ, բարերազդութիւն հայցելով իւր ազգին իւր զաւակին, ոմն Արագածի ծաղկաւէտ ձորերից Աստղիկ Էր պաշտում սէր և գումար պաղատելով մրտագին, Թողում ասել և այն տկարամիտները, որոնք երեխի և աներեցին էակների ստեղծող Արարչապետին մողած, յանդէտս նորա անբան և անզգայ տարերքն էին պաշտում առիւրիսափ: Ահա կոապաշտութեան այս սարսափելի գեհինի եռման և բարբորման ժամանակն էր որ, մեր նախնիք, Աստղուց հոգւով և սրտով խորթացած այսպիսի ապիկար ժողովրդին դէպ աստուածոպաշտութիւն, դէպ տուաբինութիւն, դէպ եղբայրսիրութիւն զրգելու և առաջնորդելու համար, օր ըստ օրէ բազմացրին իրենց կրօնական իմաստալից երկերի թիւ, որպէս զի՞կարգան այս խօթամիտները, և իրենց՝ Աստուծոյ վերայ ունեցած խեղաթիւր միտքն ու գաղափարը ուղղել ջանան, առանց միւսնկամ շեղուելու ճշմարտութեան ճանապարհից, որի համար Փրկիչը արբայութեան գուռն է անուանում:

Այսպիսի զմնդակ դարերի աստուածընդէմ մեղքերով ապականուած չարանէր ժողովրդի բարբի, վարքի վերայ գրուած բացի վերդիշեալ զրաւոր վաստակներից, մեր նախնիք, սկսած Արասիսի բերանից, Տորոսի գոտիներից, Վարագայ և Գրգուռի մարմանդ ծոցերից, վերին Յաւիտենականի առաջ մի ահաւոր ձայն ևս բարձին, ձայն՝ որի արձագանքը մարդկութեան սրտի մէջ ընդունակ է մշտապէս ցանել, ցրուել գումար և գործով. ձայն՝ որի ամեն մի բեկ բեկ հնչմունքը մեր արդար և անարդար գործերն են հաշիւ տալիս ծածկագէտ Աստղուն, ձայն՝ որի առաջ խոնարհութեամբ ծունկ իջաւ ճարտար երգեհոն, իւր անոյշ գայլայլիկները լսել փոխազրել իւր քնարի, իւր տաւզի և սրնդի վերայ: Աղ արդեօք լսեց այս ձայնը, և ժպիտ ի գէմս չքարերանից յարաժամ ցող և անձրեւ բաշխող երկնաւոր արդար Տիրոջ: Ար թիրու բռնաւոր ունկն զրաւայս ձայնին, և ազատութեան աջ չկարկառեց իւր բանտի և կապանքի մատնուած եղկելի որդւոց: Ար վայրագ հոգին լսեց այս ձայնը, և ողորմութեամբ և տուրքով չելաւ միիթարերել աշխարհիս ապարազդներին: Եւ ի՞նչ է արդեօք այս ձայնը, այս բարբառը, որ մեր մտաց և զգացմունքի վերայ այսչափ ներգործութիւն և զօրութիւն ունի: Այս ձայնը, այս բարբառը Աստուծոյ պանչելի օրինաց և պատուիրանաց ճարտար լուսանկար Շեշտիւն է, որը նոյն օրէնքները և պատուիրանքները ոչ թէ սինէական ամպաճեմ գագաթից է մեղ նկարում, ուր լսելու հա-

մար խռնուած ժողովուած էր գոռոզն Խորայէլ թերահաւատ հոգւով-
այլ մի սուրբ յարկի տակից որին հիւնչով ենք կոչում, և որի նուիրա-
կան քարերի վերայ ամենքս հաւատարմութեան ձեռք դրած՝ պաշտում
պաշտպանումենք Նորան թշնամու անհամբոյր աւերմունքից:

Քրիստոնեայ եղբայրներ, ուսման փրկարար գիտելեաց վերայ ազգու
և անոյշ բարրառով մեր սրաի հետ ներգաշնակ խօսող, մեր նախնեաց
այս կենգանի և ոգեբուզն գրուածքները իմաստասիրենք լրջմտութեամբ:
Խմաստասիրենք, որովհետեւ նոքա, մեզ՝ հաւատոյ մէջ անարի և տկար
մարդիկներիս ոչ այլ ինչ են սովորեցնում, եթէ ոչ անյոզգողդ հաւատ
և ամբիծ սէր: Խմաստասիրենք, որովհետեւ նոքա և մեր կեանքը աշ-
խարհիս գարշ աղտեղաւթիւններից ազատ պահպանող արդարութեան
և զգաստութեան դասեր են սովորեցնում: Սիրենք գառն աշխատան-
քով կառուցած նոցա այժմ շէն և անշէն սրբավայրերը. և ինչ հոգւով
վերաբերուեցին նոքա գէպ այս անշունչ զաստկերտները, նոյն հոգւով
վերաբերուենք և մենք նրանց, ընդ միշտ ծառայացնելով նոցա մեր բա-
րոյական օգտին: Սիրենք սոյն ձեռակերտների վերայ կեանք և ջանք
մաշող մեր տօնելի սուրբ հայրերին. և ինչպէս նոքա իրենց զլուխը
սուրբ գրքի սնարի վերայ դնելով իմաստացան և զարգացան պէսպէս
շնորհներով: այսպէս և մենք նոցա քաղցրախօս երկերի վերայ, անդուլ
անդադար ձեռք դնելով: մարդենք նրանցով մեր հոգին ու միտքը կա-
տարեալ ուսմամբ և կատարեալ գիտութեամբ:

ՍՈ.ՀԱԿ ՍԱԼՐԳԱԼԵՎ.Գ.

ԳԱՐՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ.

Մայրակարմիր նշոյլք Արփերին
Երկնից ի ծիր երբ ցոլան վառ
Եւ բոց ճաճանչքն Հայոց լերանց
Զբարձրաբերձ ներկեն կատար,
Ո՞հ, դու, սիրտ իմ, մի հրճուիր, մի,
Զէ այն գարուն Հայաստանի:
Գահոյք ճմրոն յապտիպայից
Երբ գիտապատ անկցին կործան
Եւ գետք պղտոր ի ծով ահեղ
Փութան ալեօք վիշապամայն,
Ո՞հ, դու, սիրտ իմ, մի հրճուիր, մի,
Զէ այն գարուն Հայաստանի:
Առուակք վճիտ եւ հեղասոյլ
Երբ սրանան ծաղկանցն ի հոյլ,
Վարդ, մանուշակ եւ սուրբ շուշան
Զկենուանակն բուրեն զրոյր,
Ո՞հ, դու, սիրտ իմ, մի հրճուիր, մի,
Զէ այն գարուն Հայաստանի:

Երբ ընդ այգւոյն ցօղատարտի
Թուչի զեփիւր մեր կենսառիկ
Եւ ընդ բաղկիւն թեւոց նորին
Զուղի լայնեն սէջք դալարիք,
Ո՞հ, դու, սիրտ իմ, մի հրճուիր, մի,
Զէ այն գարուն Հայաստանի:
Երբ ժաղկալից հայսին ի գող-
Գաւոնիկն չքնազ հանէ գրնդիւն
Եւ հիացմամբ էք համօրէն
Հրճուին ծառոցն ի սօսափիւն,
Ո՞հ, դու, սիրտ իմ, մի հրճուիր, մի,
Զէ այն գարուն Հայաստանի:
Եսր քաղցրասոյլ երդէ սոխակ
Ո՞նկակորոտ ի գեղ վարդին,
Եւ հանէ ճիկ նորիկ ծիծառն
Եւ սուլէ սուրբ Ճայն սարեկին,
Ո՞հ, դու, սիրտ իմ, մի հրճուիր, մի,
Զէ այն գարուն Հայաստանի: